



ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարվանը 6 րուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տիկին Մարիամ Գաւթեան և Յովհաննէս Իսահակեան ծովի ա-
նեանցնելով ցաւօք սրտի յայտնում են առաջինը իր ամուսնու, իսկ երկրորդը՝ հօր,
Ի Ս Ա Հ Ա Վ Մ Ա Ր Տ Ի Ռ Ս Ե Ա Ն Ծ Ո Վ Ի Ա Ն Ե Ա Ն Յ Ի
մահը և խնդրում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին յարգել հան-
գուցեալի յուզարկաւորութեան հանդէսը, որ տեղի կունենայ կիրակի, ապրիլի 7-ին,
առաւօտեան ժամը 10-ին իր սեպհական տանից (Նազարեանց և Սերգիսեանի փո-
ղոցների անկիւնում) գէպի Մոզնու ս. Գեորգ եկեղեցին:
Ամբիճքը կը կատարվի ուրբաթ և շաբաթ օրերը ապրիլի 5-ին և 6-ին, երեկո-
յեան ժամը 7-ին:
1—1

Սի մէջն Պառաւելեանցը պատիւ ունի յայտնել բարեկամներին և ծանօթներ-
ին, որ իր ամուսին
Տ Ի Վ Ի Ն Գ Ա Յ Ե Ա Ն Է Պ Ա Ռ Ա Ի Ե Ա Ն Յ Ի
մահի քառասուն օրը լրանալու առիթով, կիրակի օր, ապրիլի 7-ին, Քա-
մոցեց եկեղեցում, պատարագից յետոյ կատարվելու է հոգեհանգիստ: 1—1

ԲՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Աշխատող դասակարգի սնունդը. Հասարակա-
կան քննադատութիւն չը կայ. — Ներքին Տեսչութիւն.
Օրէցօր. Նորից երկու խօսք Ստալինին.
Նամակ Բաղրից. Նամակ Արաբաբեկի. Նա-
մակ Գեղարքունից. Նամակ Գուրայից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ
Թիֆլիսից. Նամակ Բաղրաբեկից. Նամակ Պարս-
կաստանից. Շէջարական աղբայրն յուշանա-
ղէս. Նոր բարձրութիւններ. Գարշակյան ապա-
կենտրոնացում. — ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ. — ՅԱՅԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայոց Հրատարակ-
չական ընկերութիւնը.

ԱՇԽԱՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՍՆՈՒՆԴԸ

Անգլիական «Economic Journal» ամսագրի
մարտի համարում պրօֆեսոր Նիլթի գե-
տեղել է մի հետաքրքիր յօդուած «Ազգերի
սնունդը և աշխատող յօդուած» վերնագրով:
Այդ յօդուածի մէջ հիմնական կերպով ա-
պացուցվում է, որ լաւ աշխատող ազ-
գերը նրանք են, որոնք և լաւ են
կերակրվում:

Բելիայում աշխատող դասակարգը աւելի
քիչ է մի գործածում, քան Անգլիայում,
և համեմատաբար նա ֆիզիքական աւելի

պակաս ոյժ ունի, քան անգլիական աշխա-
տողը: Անգլիան առաջին տեղն է բռնում
ամբողջ Եւրօպայում սնունդի տեսակետից:
Անգլիայի աշխատող ամենաուժեղն է հա-
մեմատած ֆրանսիական և գերմանական
աշխատողներին հետ: Անգլիացու հետ կարող
է հաւասարվել և երբեմն նրանից գերա-
զանցել միայն ամերիկայի աշխատողը, որ
շատ բաւարար կերպով է կերակրվում:

Անգլիական բանւորները ոյժը յայտնի է
վաղուց: Դեռ 1841 թուականին, երբ նրանք
հրաւիրված էին Ֆրանսիա Պարիզի և
Բուէնի երկաթուղին շինելու, նկատվեց, որ
նրանք ֆրանսիական բանւորներից ուժեղ
են մի երրորդականով: Ինժեներները փոր-
ձեցին ֆրանսիական բանւորներին էլ լաւ
կերակրելու և սրանք սկսեցին կատարել
նոյն գործը, ինչ որ կատարում էին անգլիա-
ցիները: Շատ անմիջեմաբ է իտալական
բանւորի սնունդը. նա մեծ քանակութեամբ
ուտում է օսլայ պարունակող նիւթ և
շատ քիչ միս: Նա իբրեւ բանւոր թոյլ է և
շուտ յոգնում է: Նոյն տեսակ են և թիււրք
բանւորները:

Ձեռք կարող վտաահութեամբ ասել, թէ
ինչպէս է կերակրվում հայերի մէջ՝ բաՆ-
ւոր, աղքատ, մշակ դասակարգը: Մեր

ամբողջ, մշակ դասակարգը վերին աստի-
ճանի խնայող է, և այդ հանգամանքը
հիմք է տալիս կարծելու, որ սնունդի և
կերակրվելու կողմից հայ ժողովուրդը, մա-
նաւանդ աշխատող դասակարգը, շատ էլ
բաւարար պայմաններին մէջ է: Իսկ պրօ-
ֆեսոր Նիլթի տեսակետից, թէ «լաւ աշ-
խատող ազգերը նրանք են, որոնք շատ միս
են ուտում», մեր ժողովուրդը չէ կարող
այդ ազգերի թւին պատկանել, որովհետեւ
մեր գործածութիւնը մեր աղքատ դասա-
կարգի մէջ շուրջութեան շաբէն է անց-
նում:

Ցանկալի է շատ, որ այս հարցը, այն է
ժողովրդի լաւ կամ վատ կերակրվելու հար-
ցը ուսումնասիրութեան նիւթ դառնայ
թէ մեր դաւառական թղթակիցների և թէ
այն մարդկանց համար, որոնք գտնվում են
ժողովրդի մէջ, միտ են մեր բանւոր, աշ-
խատող մշակ դասակարգին, որպէս զի
մենք հնարաւորութիւն ունենանք այդ մա-
սին մի որոշ կարծիք յայտնել:

Մա կարեւոր հարց է: Առանձին ա-
ռանձին դէպքերում չէ կարելի որոշակի
կերպով նկատել լաւ սնունդի ազդեցութիւ-
նը, բայց երբ բանը գալիս է ամբողջ ժո-
ղովուրդների և մասնաւոր սնունդի ազդեցութեան,
մասնաւոր բանւոր մարդկանց կերակրվե-
լուն, այն ժամանակ սնունդի ազդեցութեւր
շատ խիստ կերպով նկատվում է և լա-
ւ վատի տարբերութիւնը աչքի է ընկնում
զգալի կերպով:

Ժողովրդական սնունդը բարւոքել նշանա-
կում է ժողովրդի աշխատող ոյժը բարձրաց-
նել և նրա արդիւնաբերական ընդունա-
կութիւնը զարգացնել: Գոյութեան կուռի
մէջ այդպիսի ազգերը կարողութիւն են
ձեռք բերում աշոյրութեամբ մաքառել և
յաղթող հանդիսանալ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆԵԱՌԱՍՈՒԹԻՒՆ ԶԸ ԿԱՅ

Նորերս Ռուսաստանի զաւառական քա-
ղաքներից մէկի դուռնայում, երբ մի ձայնա-
ւոր, զայրացած տեղական լրագրի անարդար
յարձակումների դէմ, առաջարկեց դուռնա-
յին «միջոցների դիմել անարժան մամուլի
բերանը փակելու համար», քաղաքապետը
պատասխանեց. «Այ, չը պէտք է փակել

մամուլի բերանը. տուէք նրան ամենայն
ազատութիւն քննադատելու, յարձակելու.
դրանից կօղովի միայն հասարակութիւնը:
Սակայն կայ մի միջոց սանձահարելու ա-
նարժան մամուլը և անարժան գործիչնե-
րին—հասարակական քննադատու-
թիւնը»:

Ամեն մի հասարակութեան, նոյն իսկ ա-
մենազարգացած և քաղաքակիրթ ազգերի
մէջ միշտ կարող են գտնվել անարժան,
արատաւորված, բարոյապէս ընկած հասա-
րակական գործիչներ, որոնք հասարակական
գործի, ընդհանուր օգտի վրա նայում են
միայն իրանց շահերի տեսակետից: Սակայն
այդ տեսակ գործիչները աշոյրութիւն են
ունենում մինչև այն օրը, երբ նրանց անար-
ժան գործերը, սխալագործութիւնները դեռ
մերկացրված չեն լինում: Բայց երբ տեղի է
ունենում այդ մերկացումը, երբ որ ամբա-
տանութիւնները ապացուցվում են վատա-
բով, արատաւորված հասարակական գոր-
ծիչը վայր է ընկնում բոլորովին, դուրս
է և նրա դերը, իբրեւ հասարակական գոր-
ծիչի, այլ ևս յաւիտեան վերջացած է հա-
մարվում: Նա թաղվում է հասարակական
արհամարհանքի գերեզմանում:

Նոյնը տեղի է ունենում և մամուլի ա-
նարժան, արատաւորված, փողոցային օր-
գանների վերաբերմամբ: Երբ յայտնվում է,
որ մի որ և է լրագրի պարսկութեամբ է շան-
տաժով, ծախում է իր գրիչը, դաւաճա-
նում է մամուլի սուրբ սկզբունքներին,
նա ենթարկվում է հասարակական անխնայ
արհամարհանքին, նա կորցնում է հասարա-
կութեան համակրութիւնը և նա չէ կա-
րողանում այլ ևս որ և է բարոյական ազ-
դեցութիւն գործել:

Այդպէս են վարվում, այդպէս են պատ-
ժու մամուլի և հասարակական անարժան,
կեղծող, ստոր գործիչներին այն երկրներ-
ում, որտեղ կայ հասարակական քննադա-
տութեան ոգին: Այդպէս պէտք է վարվել
և մեզնում: Հայոց հասարակութեան մէջ:
Մեր հասարակութեան մէջ ոչ թէ քիչ չեն,
այլ շատ շատ են անարժան, արատաւոր-
ված, վնասակար գործիչներ և շատա-
թիւսներ: Մեր հասարակութիւնը յաճախ
առիթներ է ունեցել համոզվելու այս կամ
այն հասարակական գործիչի անարժան,
ստոր վարմունքի, այս կամ այն փողոցային

թիւններից համեմատաբար արժանաւորագոյնը
ընտրելով, որ այնքան էլ զօտար և պատասխա-
նատու գործ չէ: Երկրօրէ կարգի գործունեու-
թիւնը Մասնաժողովից պահանջում է աւելի
զեր, որը լրջութեամբ և բարեխղճութեամբ կա-
տարած դէպքում, կունենայ ահադին նշանակու-
թիւն, մասնաւորապէս ի նկատի առնելով մեր
ընթերցող հասարակութեան բացառիկ պայմա-
նները:

Այդ, ինչպէս է կատարել ընկերութեան
խմբագրական մասնաժողովը իր այդ պատասխա-
նատու պարտականութիւնը անցնել 1895 թւին:
Շատ թոյլ և անփութ կերպով—կը պատասխա-
նենք մենք, առանց մի րօպէ վարանելու լիք
«Մշակ» էջերը ներքին, մենք ուրախութեամբ
կը բերէինք այն 28 դրբերի ու հեղինակների
անունները, որոնց հետ Մասնաժողովը հարկա-
ւոր է համարել ծանօթանալ նրանցից թարգմա-
նութիւններ անելու համար. այն ժամանակ մեր
մեզադարձի ամբողջ ծանօթութիւնը աւելի հա-
կանալի կը լինէր: Այդ 28 դրբերից երկուսը
պատկանում է եւրօպական հեղինակներին, մնա-
ցածները ուսաց հեղինակների աշխատութիւն-
ներն են: Միթէ յիշուի խմբագրական մասնա-
ժողովը ամբողջ եւրօպական գրականութեան մէջ
ոչինչ չը գտաւ թարգմանութեան արժանի: Նոյն
իսկ ուսաց գրականութեան մէջ կան անթիւ
թարգմանութիւններ և դեռ էլ չարունակվում

չնչեց ընկերութեան գործունեութեան մէջ: Հա-
սարակութիւնն էլ իր կողմից զարմեալ չըստ
արժանոյն: Գնահատեց նոր սերնդի ջանքերը,
հարկաւոր անդամներ տալով ընկերութեան
գնահատան գաւառական քաղաքներից և գնելով
նրա հրատարակութիւնները հաղարկելով: Այդ

երկու, միմեանցից բոլորովին տարբեր գործու-
նեութեան խարակտերիստիկայի ձեւաբանութիւնը
հաստատուելու համար կարիք չը կայ մասնէ մաս-
րամասն քննութիւնների մէջ. բաւական է միայն
ի նկատի առնել 1895 թւի տեղեկագրի 13 ե-
րեսում դեռնողված համեմատական աղիւսակը:
Ահա այդպիսի մի քանի հետաքրքիր թւեր:

	Հրատարակ- ված գրքեր.	Անդամներ.	Մուտք.
1886	1	28	2007
1887	1	14	206
1888	2	18	907
1889	1	113	1934
1890	1	88	2906
1891	16	113	2022
1892	18	359	5473
1893	12	313	5052
1894	12	365	4907
1895	18	442	6872

Առաջին հինգ տարին գործել են հին սերնդի,
կամ որիչ խօսքով յետագէմ կոչված նոր-
ասկեցութեան, իսկ երկրորդ հինգ տարին կու-
սերնդի, կամ առաջագէմ կուսակցութեան ներ-
կայացուցիչները, և այդ տարիներին վերաբերող

ՆԱՍՄԱԿ ԲԱԳՈՒԻՅՑ

Ապրիլի 2-ին

Հրդեհ հրդեհի ետևից: Շարժվելով դիտելով, լայնացող զինվորական զորքերի հրդեհից հետո, որ պատճառով է այդ հրդեհը, դեռ չը պարզաբանած բռն ապառախում, ահա տեղի է ունենում մի ուրիշ տեղի, քաղաքի կենտրոնում մի այլ հրդեհ, առերի կատարելի ոչ միայն և մեծ վնասով: Ինչպես արդեն հեռագրել ենք, անցած գիշեր, լայն հրդեհաբլիթ, կրակի ճարակ դարձաւ Լալայեանի ընդարձակ շինությունները, տանակալ խանութներով: Մի քանի ժամում, ծովից մի քանի քայլ հեռավորություն վրա, քանից առերի մեծ խանութները մոխիր դարձան: Հրդեհաչեջները անհաշիվ խանութները պղծեցին: զեպեցին զանազան խանութները և անկարող է լինում չոչափելի օգնություն հասցնել: Օգնությունը դժուար է դառնում այն ժամանակ միայն, երբ օգնություն են գալիս Նորից եղբայրները հրդեհաչեջները: Վերջին երկու հրդեհի ժամանակ էլ, պետք է խոստովանենք, Նորիցի հրդեհաչեջները մեծ ծառայություն ցույց տուցին:

Շահապարենների տան վերին յարկում «Կովկաս» հիւրանոցն էր, մոտ քառասուն սենյակներով, իսկ ներքին յարկը բաժանված էր զանազան խանութներով և ճաշարաններով: Տունը ապահովագրած է 85,000 ռուբլիով: Հիւրանոցատեղը մեծ վնաս է կրել, նրա կահ-կարասիքը ապահովագրած չէ եղել, վնասը հաշուում են մոտ քան հազար ռուբլի: Հրդեհը պատահել է ծառայի անզուգույթից: Նա գնում է ներքին, նստանից ձեռք բերելու, վառում է մոմը և անզուգույթից վառած լուցկին չարտում, բռնկում է կերպարի տակալը: Մոմային և ուրիշ մի երկուսին հաղի հաղ աղողովում է աղաղակել կրակից:

Ապահովագրված են նոյնպես թե Լալայեանի պարկում շինությունները և թե բոլոր կրակված խանութները: Վնասը հաշուում են մինչև կես միլիոն ռուբլի: Կրակը սկսվել է Միրաբանի լամպային խանութի ներքնասանից, պատճառը դեռ չէ պարզվել: Չանապան հրդեհաբլիթները շատ են անվտանգ: Միրաբանի մասին անհատաբար լուրեր են պատում ժողովրդի մեջ: Վնասություններ անկասկած երևան կը հանե իսկական եղբայրները: Խանութատեղը Միրաբանի, որ մի և նոյն ժամանակ աղբված շինություն կապալառում է, բանտարկված է:

Ն. Դ.

ՆԱՍՄԱԿ ԱՍՏԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարտի 31-ին

Այսօր քաղաքացիների ժողովը դադարեց Նորին Կայսերական Մեծությունների թագադրության յիշատակը յարգելու հարցով և ընտրեց մի յանձնաժողով, որը պիտի ծրագրեր մշակել և առաջարկել քաղաքային ժողովին: Շատ ցանկալի է, որ կիրակնօրեայ դպրոցի կամ հիւանդանոցի վրա կանգ առնեն, քանի որ դրանց մեծ կարիքը դադարում է մեր քաղաքում: Եւ իրան ինչպիսի կարիք է առերի լաւ յարգել այդ օրը, եթե ոչ գիտություն լայնում, որի մի փոքր նշողին անգամ կարող է խառնուրդ լինել մեր ժողովուրդը, եթե ոչ մարդկային տանջանքը մի փոքր թեթեւացնելով:

Կիրակի օր, ապրիլի 7-ին, քաղաքային ընտրությունները կը լինեն: Այսօր նախապատրաստական ժողով էր: Լիազորների թեկնածուների մասին համարեալ թե մտքերի փոխանակություն չը կար, միայն Արշակ Գրիգորեան, որ նախնադատից նշանակված է ընտրողական ժողովին նախագահ, ծանօթացրեց ժողովականներին քաղաքային ինքնավարության մի քանի կարևոր կետերի և առաջատար ընտրողական սխեման հետ:

Ընտրողների թիվը 223 է, որոնք, բացի երեքից՝ բոլորն էլ հայ են: Արանցից 46-ը մինչև այսօր ապառիկ ունեն իրանց վրա, հետաքրքիր են մասնակցել ընտրություններին: Մնացածները չեն շատ քիչ են մտածում իրանց իրաւունքների և պարտականությունների մասին: Առհասարակ շատ քիչ է խօսվում կանխդատների մասին, անտարբեր են վերաբերվում դեպի ընտրությունները և կարծես թե քաղաքային ինքնավարության մասին:

վարության ահագին նշանակությունը այնպես խորը չեն ըմբռնում, ինչպես պետք է: Այն ինչ, մեր քաղաքը շատ քիչ է նման քաղաքի, և շատ է կարող քաղաքային ինքնավարության բարեփոխություն:

Քաղաքային առաջի կանգնեցող ամենից շատ անունում են ընտրողական ժողովին նախագահ Ա. Գրիգորեանին, որը՝ ճշմարիտը խոստովանած՝ համեմատաբար, առերի է յարմար և համար պատասխան այդ պաշտոնի համար: Քաղաքի շահերի տեսակետից միանգամայն ցանկալի է Ա. Գրիգորեանի ընտրությունը:

Ձ. Տեր-Գրիգորեան

ՆԱՍՄԱԿ ԳԵՐԵՆՆԵՑ

Մարտի 27-ին

Եթե ամբողջ հայությունը հրաժարվի իր պատկանական անմիտ սովորություններից, դերբենացի հայը այդ կողմից ոչ մի քայլ էլ չի անի: Ճշմարիտ է, այստեղի հայերը արտաքինով բաժանված են և կուլտուրական ժողովրդից, բայց թե այդ «սեբաստիական», այդ «չեխապուլի» տակ որպիսի հոտած, ներսած մտքեր և անգամ դժուար է: Որքան ուզում էք ասացեք, համոզեցեք, բայց դերբենացի դարձեալ մնում է իր թմբեցնող պրինցիպին հաւատարիմ՝ «Երբեք գնա ես, նեյս-դն գերեկ»:

Օրինակի համար ասենք, զալիս է Զատիկը: Առաջարկում էք, որ սովորական մատաղի համար հաւաքած գումարը (հաւաքվում է մոտ 150 ռուբլի), կամ նրա մի մասը յատկացնեն տեղական Բարեգործական ընկերությունները: Անկասկած, ընկերությունը այդ գումարը առերի լաւ նպատակի կը ծառայեցնի, քան թե մատաղ բաժանելն է: Սակայն, ասողին լսող է պետք:

Մի ուրիշ օրինակ: Մեծանում է մի հայ: Ոչինչով չէ կարելի համոզել հանգուցեալի ազգականներին, թե փոխանակ «սովորական» դերբենացի տան հայրի, «եօթի» հայրի և «տարեկան» հայրի, կարելի է մի յայտնի գումար նուրբել որ և է ազգագույն հիմնարկները: Ձե՛ որ նա ամբողջ 200—300 ռուբլի է ծախում և ամենայն ճշգրտեամբ տալիս է այդ «հայրեր», հաւաքում է մի քանի տանակալ առանց էլ կուշտ մարդիկ, ուստիցն է, խմայնում և բաց թողնում: Թե երբ պետք է վերանան մեզանից այդ սովորությունները, դա միայն Աստուած գիտէ:

Կ.

ՆԱՍՄԱԿ ՂՈՒԹԱՅԻՑ

Մարտի 27-ին

Նորիս Բագուից Ղուբա եկաւ և այստեղից ճանապարհովից դէպի Գերեհնէ խաղաղ կայաբանը: Բագու-Պէտրովիկ երկաթուղու կառուցման համար նշանակված առաջ ինժեներ Բարդիսովսկի: Նա պատմել է այստեղի մի պաշտոնական հետեւալը, մասնաւոր խօսակցութեան մէջ. «Ենթադրվող երկաթուղին անուշտ պիտի վերջանայ մինչև երկու տարի, նա կանցնի Ղուբայից 23 վերստ հեռավորություն վրա, այնքան մի փոքր դէն վէլվէլա կայաբանից, որը Բագուի ճանապարհի վրա է գտնվում, և Ղուբայից 21½ վերստ հեռավորություն ունի: Ճանապարհը Պետրովսկում մինչև Գերեհնէ վաղուց են գտել և 1894 թվականին հաստատել են, իսկ ինչ որ վերաբերում է Գերեհնէից մինչև Բագու գիծը որոշելուն, այդ հիմա են սկսում անել»:

Ինժեներների խումբը, որի գլխավորն է Բարդիսովսկի, ներկայումս գտնվում է Ղուբայի գաւառում և ասում են, որ խաղաղի մոտ է: Ի դէպ, մեր քաղաքի ազգաբնակիչները մտադրվել է թաղաւոր Կայսրին խնդրել ներկայացնել, որպէս զի երկաթուղին Ղուբայի մօտով անցնի:

Հասկանալի է թե որքան օգուտ ունի երկաթուղու մեր քաղաքով և գաւառով անցնելը, քանի որ Ղուբայի գաւառը շատ բան է արտադրում, և կարող է առերի շատ արտադրել, եթե ճանապարհների յարմարություն ունենայ: Հասարակ սպիլը, որը տանում է, զիցուք, մրգեղէն, հասնում է Ղուբայից Բագու 6—8 օրում և տարածք ճանապարհին կամ փչանում, կամ անհամարժեք, իր առաջվայ համը, հոտը կորցնում է: Մենք հաստատ գիտենք այդ բանը: Սակայն բացի ստղեղէնից, Ղուբան հայկաթիւմ է Բագուին և կաւեղէն, թոկեղէն, ածուխ, փայտ, ծառեր, հող (սե

հող, ծառեր, ծաղիկներ անկելու, ցանկելու համար), ցորեն, գարի, իւղ, ձու, պանիր, թռչնաղէն, ձկնաղէն, գորգեր, լէզգու շաւեր, ձի, ոչխար, և այլն: Հայկում են, որ տարվայ մէջ 8 միլիոն պուլ ապրանք է արտահանվում, սակայն այդ քանակությունը անկասկած կը կրկնապատկվի, կը տասնապատկվի, եթե միայն ճանապարհների յարմարություններ ունենայինք:

Մ. Ս.

ՆԱՍՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նոր-Նախիջևան, մարտի 28-ին

«Մշակի» 35-րդ համարում, Նոր-Նախիջևանից հաղորդված լուրը, թե Մոսկվայում հրատարակվող «Գրականական և Պատմական հանդէսը» առաջիկայ 1897 թվից պետք է յանձնվի Երուսաղէմ հրատարակչին խմբագրութեանը, և ուղարկվի Ռոստովում Մինաս Բերբերեանի տպարանում, ճիշդ չէ: Ոչ «Հանդէս» խմբագրութեանը յանձնվում է Ե. Շահաղիզեանին և ոչ Մինաս Բերբերեանը տպարան ունի Ռոստովում:

Ե. Շահաղիզեան

Մ. Բերբերեան

ՆԵՐՊԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթի ու կէտից:

Թիֆլիսի ոտակաւապետը ներկայացրել է նախնադատեալին Թիֆլիսի ազգաբնակչության թվահամարը 1895 թվի համար: Այդ ցուցակից երևում է, որ Թիֆլիսի բնակչության թիվը է 162,351, որից 88,274 արական, իսկ 74,077 իգական սեռի: Ըստ դատարանական ազգաբնակչության բաժանման է. ուղղակի—73,268 հոգի, աղանդաւոր—2,326, կաթոլիկ—2,774, բողոքական—1,900, հայ-լուսաւորչական—59,307, հայ-կաթոլիկ—6,995, հրէական—3,354, մահմետական սիւնի—2,217, մահմետական շիա—6,234, կարաիմ—19 և այլ դատարանականներ—3,957: Ըստ ազգութեան, բնակիչները հետեւալ պատկերն են ներկայացնում, ուսում—15,693 արական և 13,290 իգական սեռի, վրացի—17,328 արական և 17,295 իգական սեռի, հայ—34,764 ար. և 31,437 իգական: Մնացածները կաղմում են իմբել, օս, լեհ, գերմանացի, սաօրի, չէչէն, պարսիկ, մենգրել և այլն, փոքր թվով:

Վաղը, կիրակի, ապրիլի 7-ին, տեղի կունենայ կայսերական կովկասեան Բ ժ չ կ ա կ ա ն ը նկերություն տ ա ռ ե կ ա ն հանդիսաւոր նիստը, հետեւալ ծրագրով: Նախագահը կարտասանի ողջոյնի ճառ, քարտուղարը կը կարդայ 1895 թ. գործունէութեան տեղեկագիրը և Ն. Պրիշտիկի կը կարդայ վերաբերութեան ներկայ գրութեան մասին:

Մեղ հաղորդում են, որ վաղը, ապրիլի 7-ից, բացվում է Բալխնաղեանի նկարների պատկերասրահը և Գլուխիսկի պրոսպեկտի վրա, Զուբալովի տանը:

Երկրագործություն միջնորդություն, հողերը ոռոգելու համար և ճահճային տեղերը ցամաքեցնելու նպատակով՝ որոշել է փոխարինաբար փող տալ թե կալուածատէրերին և թե գրեզական համայնքներին: Այդ թույլատուութեանից կարող են օգտվել մեր երկրագործները և ջուր անցկացնել այնպիսի տեղեր, որոնք վնասվում են երաշտից:

Մեղ խնդրում են ապագրել հետեւեալը. «Մեր մամուլը անընդհատ մտադրել է տղէտ քահանայների պախարակելի կողմերը, բայց ցաւելով պէտք է խոստովանենք, որ այդպիսիների թիւը գնալով ոչ թե պակասում, այլ և աւելանում է: Եւ եթե մեր ժողովուրդը աստուծո է եկեղեցուց, դրա պատճառը նոյնպէս պէտք է որոնել տղէտ քահանայների տղէ վարմունքի մէջ: Այդ խօսքերը գրեւոր առիթ տուեց դատական տոներին պատահած մի դէպք, որը իբրև նմուշ առաջ ենք բերում: Հաւաքարքի մի քահանայի ծխականներից մէկը, շատ յարգելի պատճառներ ունենալով, տանը պատկրում է, որ իր բացակայութեան միջոցին, յիշեալ քահանային չընդունեն» տուն օրհնելու: Երբոր տէր-հայրը զալիս է, ծխականի կինը շատ քաղաքավարի ձևով յայտ-

նում է նրան իր ամուսնու պատուէրը: Կարծում ենք, որ դրանից յետոյ տէր-հայրը մնում էր լուռ հեռանալ այդ տանից. բայց ոչ, նա փրփրում, կատաղում է և սկսում է փողոցային ու կինոտոյական հայտանքներով անպատուել անպաշտպան կնոջը: Հարկաւոր է գիտենալ, որ այդ ծխականը պատկանում է չուճեոր դասակարգին: Մի և նոյն ժամանակ պէտք է տեսնել նոյն այդ քահանային թե ինչպէս չորդորվում է ունեւոր և աղքեցութեան տէր մարդկանց: «Ես ձեր արեւին ու անունին դուրբան, ես ձեր ստղի ցեխն եմ, դուք էք իմ տէրը» և այլ այսպիսի բառեր: Լսում ենք, որ վերաւորված ծխականը մտադիր է բողոքադիր ներկայացնելու Թիֆլիսի առաջնորդին: Բայց ինչ օգուտ:

Տպագրելով պարոններ՝ Ե. Շահաղիզեանցի և Մ. Բերբերեանցի նամակը, որ ուղղված է մեղ Նոր-Նախիջևանից, հրաւիրում ենք թղթակցին պարզել այդ թիւրիմացութիւնը: Մենք ընդունում ենք, որ մեր թղթակցները կարող են սխալվել, և որ և է սխալ, անձիւղ տեղեկություն հաղորդել մեզ. բայց գիտեմք չինքու լուր հաղորդել, ինչպէս այդ երևում է այսօրվայ նամակի ձևից, մենք ներքէ չենք կարող: Եթե այդ լուրը մեղ հաղորդող թղթակցից չի պարզի թիւրիմացութիւնը, մենք այլ ևս չենք տպագրել նրա օր և է թղթակցութիւնը:

Վաղը, կիրակի օր, ապրիլի 7-ին, աղանակաւորների թատրոնում, օր. վարդուհին տալու է մի ներկայացում: Պէտք է խաղան Սոնդուկեանցի «Խաթաբալան»: Այդ ներկայացումը պէտք է մասնակցեն հայոց չնորձակ դերասան Միրադեան, որը վաղուց թողել է հայոց բեմը, և խաղում է վրաց թատրոնում, և մի սիրող Աբրահամեան: Շատ չնորձակ կը լինի հայոց հասարակությունը, եթե մեր դերասանական խումբը քիչ-քիչ ձեռք վերցնէ չափից դուրս ծանօթ պիեսներից և տար նոր պիեսներ, նոյն իսկ թարգմանական:

Հինգշաբթի, ապրիլի 4-ին, ուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց Մանսֆելդի «Hinter» անունով կոմեդիան, — մի թեթիւ, լրջութեանից զուրկ գրութիւն, բայց որը ունի ժամանակակից պիեսների գլխաւոր յատկութիւնը՝ ծիծաղեցնել հասարակութեանը: Գլխաւոր հերոսի, կովկասցի վրացի իշխան Բուստալիձէի կոմիքական դերը կատարեց Լիւդվիգով շատ չնորձակ կերպով: Մեր կարծիքով, այդպիսի լուրջ դերասան, ինչպիսին է Լիւդվիգով, շատ էլ չը պէտք է գրաւի այդպիսի դերերով: Շատ լաւ էր նոյնպէս տիկին Մարտինովա՝ Նինայի դերում, և պ. Սոխոլով՝ փեսայ-օֆիցերի դերում: Կիրակի օր, խումբը պէտք է ներկայացնի մեր հասարակութեան սիրած պիեսը՝ «Madame sans Gènes», որի գլխաւոր հերոսը, ինչպէս յայտնի է, Նապոլէոնն է:

«Hamburger Fremdenblatt» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Երբեք մի Սանաարեան զպրոցում պահպանվում է մի նշանաւոր աշխարհագրական քարտեզ, 1640 թվի հրատարակված: Քարտեզը տալիս է Աստուգրամում և ներկայացնում է երկու կիսագունները հայերեն արձանագրութեամբ: Հայկական այդ քարտեզը նշանաւոր է մասնաւոր նրանով, որ նրա վրա շատ ճիշդ գծագրված է Նեղոս գետի հոսանքը և ներքին Աֆրիկայի բոլոր լճերի դասաւորութիւնը: Քննելով քարտեզը իր բոլոր մանրամասնութիւններով, կարելի է զալ այն եղբակացութեան, որ 250 տարի առաջ հայերը գեղեցիկ կերպով տեղեկան էին Նեղոսի աղբիւրների դրութեան, ոչ պակաս քան մեր ժամանակի ներքին Աֆրիկայի հետազոտողները: Մեր կողմից մենք կարող ենք աւելացնել, որ այդ քարտեզի մի ուրիշ օրինակը գտնվում է Շուշու թեմական զպրոցում: Ինչպէս մեղ հաղորդում են, այդ քարտեզը բաւական անխնամ կերպով է պահպանվում և ցանկալի է, որ զպրոցի հոգաբարձութիւնը հոգ տանէր, որ մի այդպիսի հոգաւորիւտ և թանկագին առարկայ չը փչանայ:

ՎԱՍԻԿԱՎԱՋԻՑ մեղ գրում են. «Արանից մօտ երեք չարաթ առաջ վաղարկավորող եկան Մալկայի՝ Խաչ, Ալաշէն և Ղալբիկայ գիւղերից մօտ 35 հայ երկաւարողներ, որոնք թողնելով

հողագործությունը, ձգելով տուն, տեղ, բարեկամներ, վճռել են թափառել Ռուսաստանի քաղաքներում գործ գտնելու: Մինչև այժմ խումբ խումբ չորսում են վաղիկավաղի փողոցներում, բայց դեռ ոչ մէկը գործ չէ գտել: Նրանք այստեղ դժուար թէ գործ գտնեն, որովհետև վաղիկավաղի առանց այն էլ անցործ մարդիկ շատ կան, բացի դրանից այստեղ գործ կատարելու համար հարկաւոր է ուսուցանել խօսել գիտենալ: Իսկ դրանք, բացի «բարին» և «խղիւղին» խօսքերից ոչինչ չը գիտեն: Այդ երիտասարդները այժմ շատ վատ դրութեան մէջ են, ապրում են քաղաքի ամենավատ տեղերում, իսկ կերակրում են միմիայն չոր հացով: Նրանցից մի քանիսը ստիպւած էին Ջատիկ տոններին եկեղեցու դռանը ողորմութիւն խնդրել: Մեր հարցին, թէ ինչի են եկել վաղիկավաղի, նրանք պատասխանեցին. «Մտալեցանք, ախպար, սխալվեցանք, մենք դիւման ունէինք, թէ աս թէրմալ մամլաքաթում լաւ գործ կայ, մէկար միսէ աստեղ մեզ-նից անօթի են»:

ՂԱՋԱԽԻՅ. «НОВ. ОБЗОР» լրագրին գրում են. «Մեր քաղաքում, Մեծ պատի վերջին շաբաթը տեղի ունեցած հետեւեալ տխուր դէպքը: Տեղական սրտա-հետաքրքրական գրասենական ծառայողներից մէկը մտաւ հայոց եկեղեցի, ուր այդ ժամանակ հսկումն էր կատարվում, և փոխանակ Աստուծուն աղօթելու, սկսեց առանց պատճառի ամենայնիկական կերպով ջղբաղին աւետարան կարդացող քահանային, ներկայացնելով նրան, ծաղրելով նրան և փողոցային հայհոյանքներ արձակելով: Այդպիսի մի սրբապղծութիւն զայրացրեց աղօթողներին, որոնք իսկոյն դուրս վազեցին նրան եկեղեցու բազը և այնտեղ նրա վրա իրանց դատաստանը կանխելու, եթէ նրան պաշտպան չը կանգնէր զղեստաւորված և խաչը ձեռքին եկեղեցուց դուրս վազող քահանան, որը հանգստացնում էր ժողովրդին փրկչի խօսքերով: «Ներեցեք նրան, որովհետև չը գիտէ, թէ ինչ է գործում»: Այդ անցըն մասին անյապաղ իմաց տրվեց ոստիկանութեանը, տեղական պրօկուրօրի օգնականին և հայոց կոմիտեային: Պրօկուրօրի առաջարկութեամբ արդէն ըննութիւն է սկսված»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Կ. Պօլսից մեկ գրում են. «Իսլամացուները կը շարունակուին Վանի Ապակեքո, Կարկառ, և Մամրառք գիւղերուն մէջ կրօնախօսներուն խառն արգելած են հեռանալ իրենց երկիրներէն, առաջ չափաճանները միայն կը թըփառուէին, հիմակ սկսած են տղաքներն ալ թըփառել, հիմակ սկսած են տղաքներն ալ թըփառել, հիմակ սկսած են տղաքներն ալ թըփառել, հիմակ սկսած են տղաքներն ալ թըփառել»:

Կ. Պօլսից ստացանք հետեւեալ տեղեկութիւնը. «Վանէն հասած տեղեկութիւնները շատ տագնապեցուցին են: Սովին և քիւրդերու ու թիւրքերու կատաղութիւնն հաւածուած խեղճ հայերու բազմութիւն մը շարունակ թափելու վրա է Վան, ուր արդէն ստուար համախմբում մը կայ: Քանի ձիւները հալին ու ճամբաները բացուին, այնտեղ ապստամբող հայերու թիւը երթալով պիտի աճի: Սակայն այս ժողովուրդը կերակրելու և անոնց կենսքը ապահովելու համար ոչինչ կարելի եղած է ընել»:

Կ. Պօլսից մեկ գրում են, մարտի 16-ից. «Անտիոքի ֆրանսական հիւպատոսը երկու օր առաջ հեռագրով կիմացնէ զեպականատներ, թէ երկու օրէ ի վեր արեւմտային զէպքեր կը պատահին Անտիոքի մէջ: Հեռագրական տեղեկութիւնը, իր համառօտութեամբ, սաստիկ կերպով յուզած է զեպականական շրջանակները»:

«Daily Chronicle» լրագիրը հաղորդում է, որ վատիկանի ու թիւրքաց կառավարութեան մէջ լուրջ թիւրիմացութիւններ են ծագել: Պատճառն այն հանգամանքն է, որ սուլթանը սպառնացել է հայ-կաթոլիկներին պատրիարք Աղաբեանին արտաքսել նրան այդ պատճառով, որ նա ֆրանսիայում հանգանակութիւն է բացել վերջին անկարգութիւններից միտումը հայերի օգտին:

Այդ լուրին կարող ենք աւելացնել Կ. Պօլսի մեր թղթակցի հետեւեալ տեղեկութիւնները.

«Իզմիրեանէն ետքը հիմակ ալ Աղաբեան պատրիարքն է, որ կենթարկուի թիւրք կառավարութեան հալածանքներուն և ճնշումներուն: Ընթերցողները գիտեն այն փոփոխութիւնը, որ այժմ կը նշմարուի հայ-կաթոլիկներու պատրիարքին ուղղութեան մէջ: Աղաբեան չը կրցաւ անտարբեր մնալ անստիկալ իրողութիւններուն առջև, որոնց զոհ կըլլար հաւասարապէս հայ-կաթոլիկ ժողովուրդը և եկեղեցականութիւնը. նոյն իսկ քահանաներ խողովորուած էին, մահմեդականութիւնը մերժած ըլլալուն համար: Աղաբեան ձայն բարձրացուց քրիստոնեայ աշխարհին առջև, բողոքելով այս գաղանկութիւններուն դէմ և դարձան խնդրելով: Կիլիկիա և Հայաստան գտնուող հայ-կաթոլիկ եպիսկոպոսներուն և լատին կրօնաւորներուն տեղեկագիրները հրատարակուեցան եւրօպական թերթերուն մէջ և գրգռեցին արեւմտաքրի եկեղեցականութեան սրտառութիւնը: Աղաբեանի բողոքներուն անմիջական արդիւնքը եղաւ՝ դրամական օգնութիւն հասցնել Հայաստան: Կերէի թէ խնդրը միայն դրամական օգնութեամբ չի վերջանար. թիւրք կառավարութիւնը, որ անհանգիստ սրտով կը դիտէր Աղաբեանին հետեւած նոր ուղղութիւնը, վերջերս բաց է բաց անհանգիստի զգած է զայն: Կիլիկիայէն և Հայաստանէն դրկուած տեղեկագիրներուն հրատարակումը սաստկացաւ կը յուզէ ամբողջ կաթոլիկ աշխարհը և Նիւօքան կառավարութեան մեղադրումը ուժիւնները ալ անբողբոքելի դարձած են: Եւ անա այդ բոլորը վերադարձով Աղաբեան պատրիարքին, յարաբերութիւնները շատ թշնամական դարձած են»:

Կ. Պօլսից հեռագրում են մարտի 30-ից. «Լուրերին նայելով, միմիայնական խորհրդում ընդունվել է Շաբիր-Փաշայի ստիպողական առաջարկութիւնը՝ Տերսիմի և Հաղբարի քիւրդերին ոչնչով զրոյցելու մտաբերել: Որոշված է ուղարկել խարբիք մի ամբողջ զօրախումբ»:

«Daily News» լրագրին գրում են Կ. Պօլսից մարտի 25-ից. «Գիւրբեքլիից հասած տեղեկութիւններին նայելով՝ Նապոլ միտիմարը ձերբակալված է և բանտարկված. նրան կամենում են հեռացնել Ալեքսանդրէտ: Ամէրիկական զբաժաւոր նաւը, որը գտնվում է Միջերկրական ծովում, չուտով խարխալ կը գցի խականդէրի ծոցում»:

«Սեր Ֆիլիպ Կերրի դիմումներ է արել Բ. Դրան» Բիթլիսում հայերին նպաստներ տալու վերաբերմամբ: Վերջին տեղեկութիւններին նայելով՝ ներքին նախաձեռնութեամբ սարսափելի թըջուտութիւն է տիրում կոտորածից ազատված հայերի մէջ»:

Ֆրանսիայի մի քանի նախաձեռնութեամբ ներկայումս ժողովարարութիւններ են կատարվում հայ կարօտեալների համար: Բէյութի և Օսմանի արքեպիսկոպոսները հրատարակել են այդ առիթով հրաւերներ իրանց հօտերին: Միւս վիճակաւորներն էլ կարգադրել են քարոզներ, որոնց մէջ և այն միտքն են յայտնում, որ եկեղեցու մեծ ընդեր, այն է ֆրանսիական կաթոլիկ եկեղեցին, պէտք է յետ չը մնայ Անգլիայի բողոքական եկեղեցուց:

Անգլիական նպաստող ֆոնդը նոյն նպատակով մի չըջաբերական է ուղարկել Ամերիկայի, Կաղարկի և Աւստրալիայի մամուլին, հրաւիրելով աջակցել քրիստոնէական պարտաւորութիւնների կատարելուն դէպի կարօտեալ եղբայրակիցները: Փոքր-Սաիյում: Շրջաբերականը յայտնում է, որ մինչև այժմ կարելի է եղել հասցնել կարօտեալներին միայն 35,000 ֆունտ ստերլինգի օգնութիւն, մինչդեռ կարելի հողաւոր համար անհրաժեշտ է, աւելուցել, հարկը հողար ֆունտ կամ մերձաւորապէս մի միլիոն բոլբոլ: Կարօտեալների թիւը մօտ 200,000 է: Անգլիական դեսպան Ֆիլիպ Կերրի և Միացեալ Նահանգների դեսպանը իրանց հիւպատոսներով հսկում են այդ բոլոր օժանդակութիւնների կանոնաւոր բաշխումը:

ՆԱՄԱԿ ԹԻՒԴԻՍՅՈՒՆ

Վան, մարտի 6-ին
Վանայ մէջ տակաւին օրուայ խնդիր է բաղ-

մաթիւ գաղթական գիւղացիներուն և տեղացի աղքատ հասարակութեան բաշխուող նպաստը: Այս նկատմամբ մի քիչ դրած ենք փետրվար 1-ի նամակաւ: Անցեալ շաբթուն ալ այդ մասին ընդարձակ տեղեկագիր մը ուղարկուեցաւ այդտեղ: Անշուշտ հասած լինելու է: Գործը տակաւին կը շարունակուի նոյնութեամբ: Խնդրարկու բաղմունքին օրէցօր աւելի և աւելի կը խոնուի աղքատներն առաջնորդարան և այն փողոցը, ուր կը գտնուին նպաստից բաշխման յատկացած տուներ: Այնչափ լեցուած է գիւղացիներով, որ, ինչպէս կըսեն, ասեղ զցելու տեղ չէ մնացիր: Այժմ հրամայված է, որ գաղթականներ իրենց տեղեր քաշուին և նպաստները գիւղերուն մէջ բաշխուին: Իսկ թէ գիւղերէն եթէ ոչ բուրբին, գէթ մեծագոյն մասին մէջ պատասպարուելու տեղ մնացեր է, կամ ինչ ապահովութիւն կայ այս թշուառ ժողովուրդի համար, եթէ գիւղեր քաշուի, այդ հարցնող չը կայ երբեք... Տեղույն անգլիական նորեկ հիւպատոսն ալ ուժ կուտայ կառավարութեան այս հրամանի գործադրութեամբ: Ներկա օր առաջ ու կանչած էր կարգ մը գիւղացիներ և կը յորդորէր, որ տեղերին դառնան, յայտնելով, թէ ինքը կերպաշատուր (լսկ խօսքով), որ այսուհետեւ ապահով և անվտանգ պիտի լինի կողմէ մեծ թիւով զօրք ուղարկել տալ ի պաշտպանութիւն գիւղացուց. կը խոստանայ վերադառնալ տալ անոնց տներ և հայկայիէն արօր, պարէն և այլն: Բայց գիւղացիք չեն համարուի և կը պատասխանեն, թէ իրենք ձեռնաւորութիւն և նպաստ չեն խնդրեր, այլ միայն հաստատուն և երաշխաւորեալ ապահովութիւն կուզեն, առանց որոյ երբեք չեն հաւանք. քաղաքէն դուրս ելլել:

Ձեզ համար հետաքրքրական է անշուշտ ստույգ իմանալ, թէ ինչ է Վասպուրկանի ընդհանուր կորուստ այս վերջին մի քանի ամիսներու մէջ: Ի հարկէ, նախարարան և ամբողջացած վիճակագիր մը ունենալ վեր է մեր ձեռնհասութեանէն, բայց պատահաբար ձեռք ինկած բաղձաթիւ վաւերական թիւղթերէ բաղկւող կարող ենք ստույգ հայելը տալ ձեզ: Այդ ալ յաջորդ անգամ:

Մ—դ

ՆԱՄԱԿ ԲՈՒԴԱՊԵՏՅՈՒՆ
Ռուսներ, մարտի 27-ին
Կը խնդրեմ, յանուն անկողմնակալութեան, հաճեցէ՛ք «Մշակին» մօտաւոր մէկ թերթին մէջ հրատարակել հետեւեալը՝

Չարմանդով կարգադրեք «Արձագանքի» № 32-ի մէջ «Կովկասեան «Իդուստ»-«Մշակ» վերնադրին տակ գրուած համառօտ ընդհատական մը, որով որպէս թէ՛ կը հրատարակէր «Մշակին» մէկ լուրը, անուանելով զայն նոյկալի և ստորին: Թէպէտ կանխաւ կարգացած էինք «Մշակը», սակայն պարտաւորեցանք կրկին աչքէ անցունել և ուշադրութեամբ կարգաւ «Մշակին» յետագայ տողերը: «Այնպէս-Միջնաթի թուրքերուն Բիւզանդ Բէշեանն է, այսինքն մարդ մը, որուն գրիչը շատ ճկուն է ու լինի ուղղութեան համեմատ ծռելու. առաջ յեղափոխական էր, հիմա թուրք համիտական»:

Այս պարբերութիւնը շատ պարզ ու յստակ գրուած է հայերէն լեզուով, ուստի բարեխիղճ և անկողմնակալ մարդու մը համար կարելի չէ թարգմանել զայն «Արձագանքի» նպատակաւոր հասկացողութեան համեմատ: Ընթեք, կը խնդրեմ, յանուն արդարութեան, «Մշակին» այդ խօսքերէն ինչպէս կարելի է հետեցնել թէ՛ պ. Բիւզանդ Բէշեան յեղափոխական է կամ համիդական: Բիւշ մը խիղճ, քիչ մըն ալ մտքը անկախութիւն, և անա պարզ է հասկանալ, որ «Մշակին» թղթաւիկը Միջնաթի և Բէշեանի մէջ նմանութիւն մը դրած է, միմիայն իրենց գրիչը ամեն հովի և հոսանքի առջև ծռելու սովորութեան տեսակէտով: Յեղափոխական կամ համիդական ըլլալ, ատիկա Միջնաթի կը վերաբերի, այսպէս հասկացանք մերն և այսպէս հասկացան մեզի հետ շատ մը պարզ ընթերցողները ալ: Եւ արդէն տարբեր մեկնել «Մշակին» յիշեալ տողերը, պարզապէս թաքուն նպատակով և մեզ անձնօթ հաշուով մը՝ գրուածքին բուն իմաստը խեղաթիւրել կը նշանակէ, բան մը, որ երբեք ներկի չէ իր կոչումը ճանաչող և իր պարտականութեան գիտակցութիւնն ունեցող հրատարակաւորին: Այնպէ, որ մամուլը միջոցաւ հանրային մտքին առաջնորդելու

պաշտօնն ու անպարէզը ընտրած են, պարտաւոր են ամեն անձնական կրթէ և գգուճ նկատումներէ վեր ընդունել ճշմարտութիւնը և յամենայն դէպս՝ իրողութիւնները ներկայացնել իրենց իսկութեան մէջ:

«Մշակին» ծանօթ տողերը, եթէ կարդանք անաշուտութեամբ և հանդարտութեամբ, երբեք «Կրկնակի մատնութիւն» մը ընելու կանխամտածութիւնը չը պիտի նշմարենք անոնց մէջ: Ուրեմն յայտնի է թէ «Արձագանք» կամ չէ հասկցած(?) «Մշակին» ամենապարզ լեզուն և կամ ճշմարտախօսութեան դիմակին ներքեւ, ուղած է անձնական նոյկալի հաշիւ մը մաքրել, «Մշակին» վարկը կոտրելու միտմիտ նպատակով և նենգամիտ յուսով:

«Արձագանքի» սղորդուած միտքը լուսաբանելու անկեղծ նպատակով, կը փութանք «Մշակին» ծանօթ տողերու իւրաքանչիւր նախադասութեան անդամները լրացնել ստորև: Ահա ստիկ:—«Այնպէս-Միտնաթի թուրքերուն Բիւզանդ Բէշեանն է, այսինքն Այնպէս-Միտնաթի մարդ մըն է, որուն գրիչը շատ ճկուն է հովին ուղղութեան համեմատ ծռել. Այնպէս-Միտնաթի առաջ յեղափոխական էր, Այնպէս-Միտնաթի հիմա թուրք համիդական է»:

Կարծեմ ալ պարզ է հասկանալ թէ ինչ ըսել կուզէ «Մշակը»: Ասանկ չէր հասկցած արդեօք «Արձագանքը», և ինչո՞ւ: «Կովկասի խղամբը» ուշադրութեամբ կարդացող մը չուտով կը համեմատ, թէ «Արձագանքը» անձնական հաշիւներէ թեղադրուած է, անցեալ հաշիւներէ մանաւանդ, ըստ որում առանց կապ ու պատշաճութիւն վնասելու, մէջտեղը նետած է Արիւստիանի անունը: Արդեօք մէկ քաթով երկու թռչուն զարնել ուղեց «Արձագանքը»:

Մեղադրելի է չիտակը: Ընթերցողներուն կը թողու՞մ դատել, թէ ո՞ր ատրիճանի անդարձութիւն ըլլալու է մարդ, որ իր անձնական մէկ կիրքը յազգեսնելու համար, այնքան բացօթյ՝ ու պարզ գրուածքի մը նշանակութիւնը իսպառ յեղափոխելով հրատարակ հանէ զայն, ի գաղթականութիւն, անշուշտ, կարգ մը պարզամիտ ընթերցողներու, որոնք կը համեմատ անպա՛կ ինչպէս որ մեկնեն իրենց: Ժողովուրդի միտմտութիւնը շահագործել չէ՛ պա: Ամբի:

Կ. Աբրահամեան

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՅ

Սալմաստ, մարտի 18-ին
Լուր կայ, որ այստեղի թիւրքաց փոխ-հիւպատոսին սպանողները, և բաղձաթիւ անցուղարձ անող քարաւանները թալանողները աւաղակ Նաբիի խումբն էր, որը մի քանի տարիներից ի վեր սպանում, թալանում, աւերում էր ուստաց և պարսից հպատակ երկիրներում:

Անցեալներ ձուլմանի կողմերից քրդերը հինգ հայ աղջիկ էին բերել և հնդական թուժաւոր ծախել Սամայեի քրդերի վրա: Բիւրդ ցեղապետ չէին Սամալը ապստղել էր բերդերին և լաւ վարձատրութիւն խոստացել, որպէս զի էլի բերեն որքան կարելի է շատ թուով: Գիւրդերը վերադարձել էին աղիւս խօսք տալով չէյ-թին կատարել նրա ցանկութիւնը: Լէնթ-թեմուր ներքի, Բուզանքի բարբարոսութիւնները սկսել են նսեմանալ այս բոլորի առաջ...:

Գիւրդ Մամադ փաշան մի հնչալ բունց սահմանադրուած, թիւրքայից վերադարձող կառաւանից: Մի քանի օր պահելուց վերջ 51 տաճկական լիւս փրկանք առաւ, յետոյ բաց թողեց: Նոյն փաշան անխաղաղ է, որ իբր թէ վրա տըրտի տայ կոտորելու և թալանելու Սալմաստի ամբողջ անհաստ ֆրանսիկն:

Մարտի 10-ին Ուրմիայում, Չալալի մօտերը ճանապարհի վրա, անցողիկները դուրս են մի հայ մահացու վիրաւորով: Մինչև տուն փոխադրելը խեղճ մեռել էր: Չարագործներն իսկոյն զբանուեցին և ձերբակալուեցին: Սալմաստի Բեաւլաշան գիւղում երկու օր առաջ, անյայտ մարդիկ մտնում են գիւղերով մի թուրքի տունը, ձիա ները գողանալու: Տանաթը իմանալով դուրս է գալիս հաւանք կանչելու: Գողերը հաւանք կանչողին գնդակահար սպանում են և փախչում:

Այս բողջին լուր առանք, որ սահմանակից Բաշապէն աւարի և թալանում է ենթարկել:

Կ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտ-
նել, որ ապրիլի 7-ին, ս. Աւետեաց տօնի օրը, ս. Նշան եկեղեցում կատարվելու է
գարոնի բարերար ԱԻԵՏԻՔ ՓԻՐՈՑԵԱՆՑԻ հոգեհանգիստը: 1—1

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Հ Ա Ն Դ Ե Ս

Գ. ԲԱՇԵՆՋԱՆԵԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻ

Բացվում է կիրակի օր, ապրիլի 7-ին, առաւօտեան 10 ժամը մինչև 6 ժամը
երեկոյեան: Գլխավորակի պրօսպեկտ, տուն Զուբալովի: 1—1

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ր Ա Ն

Ապրիլի 11-ին, երեկոյեան ժամը 10-ին նշանակված է անդամների երկրորդ ընդ-
հանուր ժողովը, քուէարկելու համար՝ 1) աւանդների երեք կանդիդատներին և 2) ժո-
ղովարանի անդամակցութեան կանդիդատներին: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷԴԻՏԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկացնում է պ. լիազօրեներին, որ անցելու մար-
տի 26-ին սկսված հերթական ժողովի շարունակութիւնը նշանակված է ԱՅՍ
ԱՊՐԻԼԻ 7-ին, առաւօտեան 10 ժամին, Բաղրաթալի Գումայի դահլիճում: 1—1

Հանգուցեալ զենեկալ-մայրի պրի Նունէ Եւանդուլեանի կտակատարները յայտնում
են, որ նրանք նշանակել են

Վ Ա Տ Ա Ռ Ե Լ Ո Ւ

ԿՏԱԿՈՂԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱԼՈՒԱՄՆԵՐԸ

1) ԵՐԿՈՒ ՏՈՒՆ, պարտիզով և զենամուկ, մտաւորապէս 600 քառակուսի սաժէն,
որոնք գտնվում են Թիֆլիսի 9-րդ ոստիկանական բաժնում, ելիսավետեան փողոցի վրա,
№ 106:

2) ՄԻ ԽԱՆՈՒԹ, սենեակով, նկուղով և զենամուկ, 9 քառակուսի սաժէն, 5-րդ ոստի-
կանական բաժնում, ճոնքերի կարգում (շապոնիկ բնակ):
Վաճառման պայմանները մասին կարելի է տեղեկութիւններ ստանալ շտաբ-կա-
պիտանի պրի Կառաբիւնէ Միլի մասնէ անից (Սոլոյակի Ստարո-Խնասիտուտա-
կայա փողոց, սեպհական տուն): (№ 37) (Ե. 2.) 3—3

Է Ժ Ա Ն Ա Գ Ի Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

(Վերամիտման փողոց, տուն № 3.)

ԲԱՑ Է } Առաւօտեան ժամ 9—2, երեկոյեան 5—10
} Կիրակի և տօն օրերը առաւօտեան 10—2

Տուն տանելու համար արվում են գրքեր և պարբերական հրատարակութիւններ: Վճար՝ ամսական
20 կօպէկ և 10 կօպէկ ընթերցարանի մօտը 2 կօպէկ. 30 ամսի արժեքը—40 Կ:

Ստացվում են՝ հայերէն 1) «Մշակ», 2) «Արձագանք», 3) «Նոր-Գար», 4) «Տարազ», 5) «Ար-
բիւր», 6) «Մուրճ», 7) «Արեւիկ», 8) «Շաւիղ», 9) «Արարատ», 10) Ժողովածուներ:

Ռուսերէն, 1) «Кавказ», 2) «Новое Обозрение», 3) «Тифлисский Листок», 4) «Русскія
Вѣдомости», 5) «Новости», 6) «Новое Время», 7) «Биржевыя Вѣдомости», 8) «Каспій», 9)
«Иверія», (Վրացերէն), 10) «Русское Богатство», 11) «Русская Мысль», 12) «Новое Слово»,
13) «Вѣстникъ Европы», 14) «Сѣверный Вѣстникъ», 15) «Миръ Божій», 16) «Недѣля».
(№ 31) 3—10



ԳԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային զործածութեան համար)

ՀՆԻՎԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մօճ միներին, խլորդներին և ուրիշ կրծողներին:
Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք
չեն մնում գետնապրկի տակ և չեն տարածում զարգացողութիւն:
ՄԱՎԱՆԵՐԻ ԴԵՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիջաւ Նա շատ հաճելի հոտ ունի և
բիժ չէ թողնում ձերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փաշտացնելով նրան, սենեակի օդին
հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:
ՓՈՇԻՄ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենապարմար միջոցն է բոլոր միջամները և նրանց ստղմերը
բոլորին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփութալիներին է լուսն և մլակներն ոչնչացնելու հա-
մար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցե-
ցը և չոճենայով նախնային անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փխտալիւնում է նրան. զրա
ցը և չոճենայով նախնային անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փխտալիւնում է նրան. զրա
համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մաշտակները և ուրիշ մարմնիկներ իրենց պահելու
համար: Փոշու ազդեցութիւնը, երբ նրան զործածում են ամեն տեսակ միջամների, միջնակների
դէմ—գրեթէ վայրկեանական է—հետեանքը զարմանալի:
(№ 23) 6—50

Հ Ա Յ Գ Ո Ր Ծ Ի Չ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետեալ հայ գործիչների պատկերները՝
Հոգեորականներ. —Հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցնե-
րից՝ ՆԵՐՍԵՍ Վ, ԳԵՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԱՐՏԻՉ Կաթողիկոսների, ԳԻՐԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (Կա-
թողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՍ ՊԱՏՐԻԱՐԻ ԻԶՄԻԼԵԱՆԻ, ԱՐԻՍԱԿԷՍ ԱՐԲԵՓԻՍԿՈՊՈՍ ՍԵՂԻՍ-
ԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԷՑԻ և ուրիշ արժանաւոր հոգեորականների:

Նայն տեղը վաճառվում են. —ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԱՅՅԻԻ, ՌԱՅԱՅԵԼ ՊԱՏԿԱ-
ՆԵԱՆԻ, ՆԵՐՍԵՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԳԱՄԵԱՆԻ (բոլոր գերեւում
նկարված), ԽՄԲԱԳԻՐԵՆԻ, ԿԵՆԴԱՆԻ ԳՐԴԼՆԵՐԻ, Նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՄԱԲԻ, ՄԱՐԻԱՍ
ՄԵԼԻԻ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆԻ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՍԱԿԻՑՆԵՐԻ յօդեւեանական արքայի, նմանապէս
ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիւր 3 ռուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԱՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱ-
ԲԻՆԵՏԱՆԻ ԿՈՂԺԱԾ պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻՋԻՏ ԿՈՂԺԱԾ պատկերները՝ 20 կօպէկ:

Հասցէն՝ ԹԻՖԼԻՍ. Փոփոգիա Թեր-Գեւոնդյան (На Михайловск. мосту). Հանապազա-
ծախը զնոյրի վրա է: (№ 117) 2—10

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ղ Զ Կ Ե Ր Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱՄԱԳԼՈՒՆ Է 23,000,000 ռուբլի:
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք
ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՐՕՍՍԻԱ» ընկերու-
թիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինք) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապա-
հովացնել 5000 ՐՈՒՐԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ
այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Րօսսիա»
ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամեայ յետոյ 52 ռուբլի:

Սոցիալական ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաեւ այն
պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերագործվին բոլոր իր
վճարած տուրքերը (պրէմիաները): Եթէ միայն ապահովագրված երե-
խան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թ. յունվարի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապա-
հովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի գրամաղկով:

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել զրա-
մազլուսնի նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ գրամաղկուր կը
ստացվի իրեն թողնել (պէսիւրա) ԿՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար,
եթէ միայն ապահովագրված երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժա-
մանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում
են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը
Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37),
Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնու-
վում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և
բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:
(№ 71) (2.) 19—52

ԾԻԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ Ն. Յ. ԲՈՋԱՐՁԵԱՆՑԻ

Գոյութիւն ունի 1858 թվականից

ԳՈՐԾԱՐԱՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԵՒՆԵՐԻ

Փ Ա Ս Տ Ե Ի Ո Չ Ի Ն Գ Ն Ա Գ Ո Վ Ո Ւ Թ Ի Ն

Յանդան համարելով ի վնաս ծնողների թանկացնել և զեղեցկացնել ծխախոտի
արկղիները և փաթեթները *), ես աւելի լաւ եմ համարում պարտնէր ծնողներին տալ
բարձր տեսակի ծխախոտ, քան արտաքուստ զեղեցիկ փաթեթներ: Ենթադրում եմ ուշա-
գրտութիւն դարձնել մեր բոլոր արտադրութիւնների վրա. նրանց յատկութիւնը բարձր է
ամեն միջոցով և նրանք արժանի են ուշադրութեան՝ իրանց բարձր յատկութեամբ:
Օրին կարելի է համեմատել միայն աշխատելով և ծախս անելով, միայն ծխախոտի յատկու-
թիւնը լաւացնելու և ոչ թէ արտաքին փաթեթները զեղեցկացնելու վրա: Պարտնէր
ծնողներին խնդրում եմ փորձել անձամբ և համոզվել:

1896 թ. ՅՈՒՆԻԱՍԻ 1-ԻՅ ԽՄ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏԱՍԿԱՅԵԼ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԾԻԱԽՈՏ-
ՆԵՐԸ ԵՒ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	Ծ Ի Ա Խ Ո Տ
(Գլանիկներ)	(Գլանիկներ)	Կովկասեան, սկսած 48
ՇԱՐԱՆԱԿԱԳՈՐՆ Փրան- սիական թղթից, ընդմի- պէս հետադարձ № 5 «ԿԵԱՐԱ»	ՍՊԻՏԱԿ թղթից № 36 Ի Ի Ժ Ն Ը Յ Ա	Կոպէկից մինչև 3 ռուբլի Ֆուկար: Մաքուր տաճ- կական, թիթեղեայ ար- կղիների մէջ, սկսած 4 լուբլից մինչև 12 ռ. Ֆուկար:
25 համար 15 Կ., 100 Կ. 60 Կ. 25 համար 25 Կ., 100 Կ. 1 Կ.	10 համար 3 կօպ.	
ԾԻԱԽՈՏ ՏԱՀԱԿԱՆ ՍԵՐՏԵՐԻՑ, ՖՈՒՆՏԸ 1 ՐՈՒՐԼԻ 52 ԿՈՊԵԿ		
Կարելի է ստանալ ամեն տեղ: Օտարաքաղաքացիների պատուէրները կատար- վում են արագ և ճշգրտութեամբ:		
	Յարգանքը գործարանատէր Ն. ԲՈՋԱՐՁԵԱՆՑԻ	
	*) Թանկագին փաթեթները և արկղը միայն վնասում են ծխախոտի լաւ յա- տկութեան:	(№ 28 և. 2.) 5—5

ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՍԱՆԸ	Գ Ի Ն Ը
վաճառվում են հետեալ հայերէն գրքերը	
1) ԷՎԵԼԻԻՆԱ, Գրիգոր Արժրուհուն	50 կօպ
2) ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ, Գ. ԱՐԺՐՈՒՆՈՆ	20 "
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. ՄԱՂԱՄԵԱՆԻ	50 "
4) ՍԱՍՈՒՆ, Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ	20 "
Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պոստային մարկա- նով:	(№ 59) 6—10